

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**  
**ՆԵՐՂՐՈՒՄՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Զ Ե Կ ՈՒ Յ Ց**

**1. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ (IT)**

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը Հայաստանի ամենադինամիկ զարգացող ոլորտներից է: Հայաստանի մասնագետները մեծ հեղինակություն ունեն աշխարհում և ի գործու են ներկայիս հայաստանյան պայմաններում իրենց առաջարկվող պրոդուկտներով մրցել այս ոլորտի այնպիսի հեղինակավոր պետություններ հետ, ինչպիսին են ԱՄՆ, Հնդկաստանը, Չինաստանը և Մալայզիան:

Ոլորտի մասնագետների կողմից բազմիցս նշվել է, որ ոլորտն այս պահին շուրջ 12 000 – 15 000 մասնագետների կարիք ունի: Այդ իսկ պատճառով կասեցվում են որոշ start-up –երի մուտքը Հայաստան և այլ պետություններին բաժին հասնում:

Անձամբ հնարավորություն եմ ունեցել Հայաստանում ԱՄՆ դեսպանատան ներկայացուցիչների հետ քննարկում ունենալ՝ ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի հեղինակավոր Տեխնոլոգիական Համալսարանի բացման հնարավորությունը Հայաստանում՝ Հայաստանի Ամերիկյան Համալսարանի օրինակով:

Կարծում եմ սփյուռքի մեր հայրենակիցները մեծ ներդրում կարող են ունենալ MIT (Massachusetts Institute of Technology) մասնաճյուղի՝ Հայաստանում բացման համար:

Որպես տեղեկատվություն նշեմ, որ ոլորտի հիմնախնդիրներին և ծրագրերին լավատեղյակ է պարոն Կարեն Վարդանյանը, Union of Information Technology Enterprises-UIITE նախագահը: Ապրիլյան պատերազմից հետո նա ներկայումս լծված է ռազմական արդյունաբերության վերականգնման՝ Հայաստանի համար ռազմավարական կարևորություն ունեցող ծրագրերին:

[/https://www.facebook.com/karen.vardanyan.50?fref=ts/](https://www.facebook.com/karen.vardanyan.50?fref=ts/)

*Լրացուցիչ հղումներ.*

<https://www.youtube.com/watch?v=5RuPULboq6M&feature=youtu.be>

**2. ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**

Խորհրդային Միության ժամանակ Հայաստանը 15 հանրապետությունների շարքում համարվում էր թեթև արդյունաբերության տիտանը: Այս ոլորտի ամենահեղինակավոր ճյուղերն էին տրիկոտաժի և կոշիկի արտադրությունները:

Ներկայումս կոշիկի վաղեմի հզոր գործարանները չեն գործում: Իսկ տրիկոտաժի արտադրության նախկին ընկերություններից որոշ ծավալով գործում է «ՏՈՍՊ» ընկերությունը:

Նոր հիմնած ընկերություններից է «ՄԵԼԱՆՏԵ» ընկերությունը, ով բավականին որակյալ արտադրանք ունի:

Բավականին լայն տարածում ունեն արդեն սպառողների մոտ կանացի, տղամադու և մանկական շատ որակյալ գուլպաներ և գուգագուլպաներ արտադրող Գյումրիի «ԼԵՆՏԵՔՍ» ընկերությունը - <https://www.youtube.com/watch?v=0EnbDqiaABk>

Գործում է նաև «Մաստեքս» ընկերությունը և ՀՀ ԱԺ պատգամավոր, ՀՀԿ անդամ Սամվել Ալեքսանյանին պատկանող «ԱԼԵՔՍ» ընկերությունը:

Նոր հիմնված մեկական մասնաճյուղ ունի «Մաստեքս» ընկերությունը՝ Վանաձորում և Ամասիայում:

Սակայն գլխավոր խնդիրը թուրքական և չինական թեթև արդյունաբերության ապրանքների հետ մրցունակության համար մնում է հայաստանյան արտադրանքի ինքնարժեքի բարձր լինելու հանգամանքը, որի մեջ չափազանց մեծ տոկոս է կազմում էլեկտրաէներգիայի արժեքն, ինչպես նաև նոր արտադրություններ հիմնելու համար Հայաստան ներմուծվող սարքավորումներն օրենքով ԱԱՀ-ից /VAT/ չազատելը:

Սակայն իմ խորին համոզմամբ, որպես միջին խավի ներկայացուցիչ և ակտիվ սպառող, մարկետինգային ճիշտ քաղաքականության առկայության դեպքում, տեղական շուկան կարիք ունի նաև այս ճյուղի այլ արտադրանքների: Մասնավորապես վերին հազուստի՝ շրջագգեստներ, կիսաշրջագգեստներ, բաճկոններ, և այլն: Ներկայումս ես ինքս օրինակ office dress-code ոճի հազուստ գնելու խնդիր ունեմ Հայաստանում:

Ավելացնեմ, որ կոշիկի արտադրությունը գրեթե վերացել է Խորհրդային տարիներից հետո: Ներկայումս գործում են «ՍԱԼԻ» ընկերությունը, որն, իմ տեղեկություններով, ևս պատկանում է ՀՀ ԱԺ պատգամավորներից մեկին, և տեղական արտադրության որոշ տոկոսին զուգահեռ իր կետերում վաճառքի ունի նաև ներմուծվող տեսականի՝ Թուրքիայից և Իտալիայից: Եվ նոր թափ է ստանում Սիրիայից հայրենադարձած մեր հայրենակիցների կողմից Հայրենիքում վերագործարկված «AVA Shoes» ընկերությունը - <https://www.youtube.com/watch?v=nmiE-NcOymc> :

Արցախում էլ գործում է «Սանդրեք» ընկերությունը՝ <https://www.youtube.com/watch?v=y6DPf2am4P0>

Կարծում եմ սպառման շուկայի առկայության դեպքում, մեծ պոտենցիալ ունի հայկական գորգագործությունը, քանի որ այն ամբողջությամբ հնարավոր է կազմակերպել տեղական ուժերով՝ ներառյալ տեղական բնական հումքը՝ մոտթին:

### **3. ՏՈՒՐԻԶՄ**

Ներկայումս Հայաստանը բավականին հեղինակավոր և հայտնի երկիր է՝ արտասահմանյան զբոսաշրջիկների համար: Դա նկատվում է նույնիսկ անզեն աչքով՝ Երևանում զբոսնելիս կամ Հայաստանի կամ երկրի պատմա-մշակութային վայրեր այցելելիս:

Սակայն իմ որոշ համեստ հետազոտությունները թույլ են տալիս պնդել, որ հյուրանոցային համալիրների 70-80 տոկոսը կենտրոնացած է Երևանում, այն էլ դրանք որպես կանոն 5\* հյուրանոցներ են: Իսկ Հայաստանի մարզերում, որտեղ տեղակայված են մեր պատմա-մշակութային կոթողները շատ սակավաթիվ են այդ հյուրանոցային համալիրները, իսկ եղածներն էլ բավականին թանկ: Անհրաժեշտ է հիմնել 2\* և 3\* հյուրանոցային համալիրներ (B&B)՝ անմիջապես մարզերում, կամ վերագործարկել խորհրդային միության հանգստյան տները, որոնք բազմաքանակ են և լքված և անմխիթար վիճակում են:

### **4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Գյուղատնտեսության ոլորտը վերջի տարիներին միակ ոլորտն է, ինչի շնորհիվ երկրում 2-3 տոկոս տնտեսական աճ է գրանցվում:

Հայաստանի բնակլիմայական պայմանները որպես կանոն բարեհաճ են այս իմաստով, սրան գումարած արևային օրերի քանակը, ջուրը, ինչպես նաև Արարատյան դաշտվայրի հրաբխային հողային շերտը դարձնում են հայկական միրգն ու բանջարեղենը հիրավի անմահական:

Սակայն այս ոլորտը ներկայումս նաև ամենախոցելիներից է՝ հետևյալ պատճառներով.

1. Գյուղացիների բերքը դեռևս ամբողջապես պաշտպանված չեն հակակարկտային համակարգերով: Փաստը ցույց է տալիս, որ հակակարկտային կայանները, որոնք որպես միջոց գործարկման մեջ են դրված դեռևս խորհրդային տարիներից, արդյունավետ չեն:

Ժամանակակից գյուղատնտեսական հնարքներից է հակակարկտային ցանցերը, որոնք մասնագետների պնդմամբ զգալի արդյունավետության տոկոս ունեն, և որոնք հիմնականում գործարկվում են Եվրոպայում:

Այս ցանցերի արտադրությունը հարկավոր է հիմնել Հայաստանում: Ներկայումս այս ցանցերը ներմուծվում են Եվրոպայից, մասնավորապես «Տեխնո ֆիտ» ընկերությունների խմբի կողմից:

<https://www.youtube.com/watch?v=AufQ4TqByaE>

2. Դեռևս խնդիր է վերամշակող – արտադրող անխափան կապի ապահովումը: Մշտապես մթերման խնդիրներ են առաջանում, մանավանդ խաղողի մթերման: Մթերումն իրականացվում է՝ պայմանագրի հիման վրա, տարածամկետ վճարմանն պայմանով: Սակայն յուրաքանչյուր տարի երկրում բողոքի ալիք է բարձրանում՝ մթերված արտադրանքի վճարումները մինչև 1-2 տարի չվճարվելու համար:

Այստեղ պատճառներն շատ են, որից մեկը սպառման շուկայի մեջ է: Հայաստանի ԵԱՏՄ անդամագրվելուց հետո կարծես թե այս խնդիրը լուծում չստացավ: Վերին Լարսը մշտապես նոր խնդիրներ է առաջացնում անցակետում:

Այդ իսկ պատճառով հարկավոր է նոր շուկաներ որոնել: Իմ պատկերացմամբ այդպիսիք կարող են լինել Միջին Արևելքի երկրները, որտեղ գյուղատնտեսական նշանակության հողերի սակավությունն կա՝ անապատի պայմաններում: Իսկ այստեղ էլ արդեն իր հերթին խնդիր է առաջանում տրանսպորտային ճանապարհների մատչելիությունը, որի միակ լուծումն այս պահին, մինչև Իրան-Հայաստան երկաթ գծի հարցի լուծումը, դա ցամաքային ճանապարհով դեպի Իրանի Կասպիսի ավազան և Պարսից ծոց՝ այնտեղից էլ ավազանի և ծոցի երկրներ:

Պատճառներից մյուսը վերամշակող գործարանների սակավությունն է, ինչպես նաև սխալ բաշխվածությունն՝ ըստ երկրի աշխարհագրության:

3. Հայաստանում մի քանի տարի է գործում է ՍՊԱՅԿԱ ընկերությունը, որը զբաղվում է թարմ մրգերի և բանջարեղենի մթերմամբ և դեպի Ռուսաստան արտահանմամբ: Սակայն այստեղ խնդիրը նրանում է, որ այս ընկերությունը միակն է որպես այդպիսին դաշտում և չունի մրցակից և, որպես կանոն, դրա պատճառով ինքն է թելադրում գյուղացուն մթերվող արտադրանքի զինը, որը պարզ է, որ ձեռնտու չէ գյուղացուն:

Այս իմաստով ՄՊԱՅԿԱ ընկերության օրինակով հարկավոր է հիմնել նմանատիպ ևս 1-2 ընկերություն:

## **5. ԱՂԲԻ ՎԵՐԱՄՇՇԱԿՈՒՄ**

Հայաստանում չի գործում աղվի վերամշակման գեթ 1 գործարան, այնինչ Արևմուտքում նման գործարանները տասնամյակների պատմություն ունեն: Փոխարենը հայաստանյան իշխանությունները նոր վարկային միջոցներ են ներգրավում օտարերկրյա ֆինանսական հաստատություններից նոր աղբավայրեր կառուցելու համար, դրանով իսկ չնպաստելով արտադրական պրոցեսի արդյունքում արտադրվող աղբի ծավալի նվազմանը:

Այս իմաստով երկրում նման գործարանի կառուցումը գերկարևոր է:

Նշեմ, որ 2015 թվականին ազդարարվեց, որ Արմավիրի մարզում վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է աղբի վերամշակման գործարան կառուցել և հիմնել ջերմատնային տնտեսություն: Ծրագրի արժեքն ենթադրում էր լինել 33 միլիոն եվրո է: Սակայն այս պահի դրությամբ այս ծրագրի մասին որևէ առաջընթացի մասին տեղեկատվություն չի հրապարակվել: Փոխարենը, 1 տարի առաջ հայտարարվեց, որ Երևանի քաղապետարանը Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի ֆինանսավորված /վարկային ծրագրի շրջանակներում/ նոր աղբավայր է կառուցելու:

Աղբի վերամշակման գործարանը կարևորագույն նշանակություն ունեցող ձեռնարկություն է, մանավանդ Երևանի համար, քանի որ Երևան քաղաքը Հայաստանում սպառման կոշտ թափոնների առաջացման խոշորագույն օջախ է, որտեղ կուտակվում է երկրի ընդհանուր կոշտ թափոնների 70-75 տոկոսը: Երևանի տարածքից քաղաքային աղբավայր է տեղափոխվում օրական միջին հաշվով 800-1000 տոննա կամ տարեկան 292-365 հազար տոննա կենցաղային աղբ:

Ստորև, որպես օգտակար նյութ, Ուրբան Ինստիտուտի 2014 թվականին կատարված հետազոտության՝ «Հայաստանում կենցաղային աղբի կառավարման ներկա իրավիճակը» հաշվետվությունը:

<http://urbanfoundation.am/wp-content/uploads/2015/04/SWM-Armenia-Overview.pdf>

## **6. ԽԵՑԵԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ**

Այս առաջին հայացքից հնարավոր է անհրապուրիչ բիզնես նախաձեռնությունը համարում եմ բավականին հետաքրքիր մի քանի տեսանկյունից:

Նախ Հայաստանում նկատվում է խորհրդային միությունից սերված սերնդից տարբերվող նոր սերնդի նաև ճաշակի կտրուկ տարբերություն: Առօրյա սպասքի հանդեպ էլ կտրուկ փոփոխություն կա: Դա նաև նկատվում է որոշ սրճարանների և ռեստորանների ոճային ձևավորման շնորհիվ նաև մեծ հաճախորդների հոսքը, ինչպես նաև տնական կենցաղում ինտերյերի ոճային տարբերությունը ակներև է:

Երկրորդը այն պետք է արտադրվի և քարոզվի որպես էկոլոգիական մաքուր հումքից պատրաստված սպասք, ինչը փաստը:

Երրորդը այն ունիվերսալ սպասք է իր նյութի բաղադրիչի շնորհիվ, որը կենցաղում կարելի է կիրառել և վառարանում և որպես մատուցվող սպասք:

Չորրորդը այն ազգային ինքնության մի մաս է միշտ հանդիսացել հայերիս համար և համոզված եմ, որ պետք է վերադառնա մեր կենցաղ:

Անցած տարի ազդարարվեց նման մի գործարանի հնարավոր կառուցման մասին:

Հայտարարվեց, որ «Ռոյալ Սթոնվեյր» ընկերությունը նախատեսում է կառուցել ինքեգործական բարձրորակ իրերի՝ սպասքի գործարան՝ այն հազեցնելով տվյալ բնագավառում առկա ժամանակակից սարքավորումներով, կատարել շուրջ 1.09 մլրդ դրամի ներդրում: Իտալական սարքավորումներով տարեկան կարտադրվի շուրջ 0.3 մլրդ դրամի ապրանք (2015թ.), որի զգալի մասը կարտահանվի Եվրամիության և ԱՊՀ երկրներ, ԱՄՆ և այլուր: Ներդրումային ծրագրի իրագործմամբ կստեղծվի մոտ 80 աշխատատեղ:

Սակայն այդ լուրից հետո այլ հայտարարություններ կամ նորություններ շինարարության ընթացքի մասին չեն հրապարակվել:

## **7. ԱՅԼ ՈԼՈՐՏԵՐ**

Շարունակելով կենցաղային թեման, մեկ այլ հնարավոր ծրագիր ավելի քան կարող է հետաքրքիր լինել հայաստանյան շուկայում:

Խոսքը պլաստմասե տարաների մասին է: Հայաստանյան խանութներում այս ապրանքատեսակի բազմաթիվ, բազմաձև և բազմագույն տեսականի կա, որը մեծ պահանջարկ ունի հայ տնային տնտեսությունների կողմից, սակայն ամբողջը ներմուծվում է Թուրքիայից:



## **8. ՓՈՔԸ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**

Այս ոլորտը ժամանակին ևս հանդիսացել է Հայաստանի գիզանտ արտադրական ներուժը: Ներկայումս այս ոլորտում գործում 2 ժամանակին հզորագույն գործարանները՝ «Նաիրիտ» գործարանը և «Վանաձորի քիմ-պրոմ»-ը մեծագույն ֆինանսական խնդիրներ ունեն: Սակայն այս խնդիրների հետ մեկ տեղ, ընկերությունների գործունեությունը վերջին երկու տասնամյակում այնքան էլ օրինական չի եղել, և այժմ ՀՀ կառավարությունը որոշ բանակցություններ է վարում այս գործարանների շուրջ:

Այս ոլորտը իմ կողմից դեռ ուսումնասիրված չէ, սակայն ֆերմերային տնտեսության ծրագրում աշխատելու ժամանակ տեղեկացել եմ, որ Վանաձոր «քիմ-

պրոմ»-ն ի վիճակի է ապահովել ամբողջ Հայաստանը գյուղատնտեսական արտադրանքի համար նախատեսված պարարտանյութով, և նույնիսկ արտահանել:

Այժմ նման պարարտանյութ ներմուծվում է Իրանից:

*Մրբուհի Ղազարյան*

*Իրավաբան*

*Երևան, Հայաստանի Հանրապետություն*

*Սեպտեմբեր, 2016 թվական*